



ԱՆՆԱ ՎԱՐԳԱՊԵՏՅԱՆ

**ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ,
ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քարտուղար,
իրավագիտության քեկնածու,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի
ասիստենտ**

**ՕՐՎԱՆՆԵՐԻ¹ (ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ²) ԹՐԱՖԻՔԻՆՊԻ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



Առողջապահության համաշխարհային կազմակերպության քարտուղարության 2010 թվականի մարտի 25-ի «Օրգանների և հյուսվածքների փոխպատվաստումը» վերտառությամբ թիվ A63/24 գեկույցի համաձայն՝ առևտրային նպատակներով բջիջների, հյուսվածքների, օրգանների ապօրինի վաճառքը, ինչպես նաև առևանգված կամ խաբեության միջոցով այլ պետություն տեղափոխված և բռնությամբ որպես «դոնոր»³ հանդես եկող անձանց օգտագործմամբ իրականացվող օրգանների առևտուրը շարունակում է լուրջ խնդիր մնալ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ միայն 2007 թվականի ընթացքում կատարված փոխպատվաստումների⁴ 10%-ի ռեցիպիենտ⁵ հանդիսացել են օրգաններ գնելու համար զարգացած երկրներից աղքատ երկր-

ներ եկած հիվանդները: Նշված կազմակերպության տվյալներով՝ յուրաքանչյուր տարի օրգանների ապօրինի առևտրի, օրգանների թրաֆիքինգի, ինչպես նաև փոխպատվաստման նպատակով կատարվող զբոսաշրջության շրջանակներում բռնությամբ կամ «դոնորների» ֆինանսական վիճակի խոցելիության օգտագործմամբ վերցվում է մոտ 15.000 երիկամ:

Պաշտոնական դատական վիճակագրության համաձայն՝ 2008-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում օրգանների թրաֆիքինգի մեկ դեպք է գրանցվել: Մասնավորապես, թիվ ԵԿԳ/0107/01/12 գործով 2012 թվականի հունիսի 31-ին կայացված դատավճռով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետև՝ Առաջին ատյանի դատարան) Ս.Հ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով նախատեսված արարքում և դատապարտել 8 (ութ) տարի ժամկետով ազատազրկման այն բանի համար, որ նա *նախնական համաձայնություն չեռք բերելով արտերկրում բնակվող, գործով դեռևս ինքնությունը չպարզված ում Ալեքսի, Ալբերտի և Բազդանի հետ, մարդկանց շահագործելու, այն է՝ օրգաններ՝ երիկամ, վերցնելու նպատակով մարդկանց հավաքագրելու, նրանց փեղափոխումը կազմակերպելու և յուրաքանչյուր անձի դիմաց երկուհազարսկան ԱՄՆ դոլար գումար վարչաիրություն սրա-*



ԼՂՀ դատական իշխանություն

նախու վերաբերյալ, ՀՀ-ում բժշկական կենտրոններ այցելելու և ինֆորմերային կայքերում հայտարարություններ տեղադրելու միջոցով, մարդկանց վիճակի խոցելիությունն օգտագործելով, բժշկական հեղափոխության և տեղափոխման ծախսերը հոգալու և յուրաքանչյուր երիկամի դիմաց փաստաբան ԱՄՆ դոկտոր գումար վարչապետություն փախու խտարուններով, հավաքագրել է Ա.Մ.-ին, Ն.Հ.-ին, Ա.Գ.-ին, Ս.Ֆ.-ին, Գ.Ս.-ին և Ա.Մ.-ին և ՀՀ պետական սահմանը հասրելու միջոցով կազմակերպել Ա.Մ.-ի, Ա.Գ.-ի, Ս.Ֆ.-ի և Գ.Ս.-ի տեղափոխումը Շրի Լանկայի Հանրապետությունը:

Վերոնշյալ գործով տուժողները գտնվել են խոցելի ֆինանսական դրության մեջ և չեն գիտակցել, որ նույնիսկ իրենց համաձայնությամբ, ժամանակին ու ամբողջությամբ կատարված դրամական փոխհատուցման պայմաններում իրենց երկկամը վերցնելը հանցագործություն է, ուստի նրանք կատարված հանցագործության (տվյալ դեպքում՝ օրգանների թրաֆիքինգի) մասին իրավապահ մարմիններին չեն հայտնել: Նշված հանգամանքը հիմք է տալիս ենթադրել, որ նման «երկկողմանի շահավետ» պայմանների և խոցելի (որպես կանոն՝ խոցելի ֆինանսական) վիճակում գտնվող տուժողների առկայությունը պարարտ հող են ստեղծում մեր երկիրը օրգանների «սև շուկայում» որպես «մատակարար» ներգրավելու համար:

Մեր կարծիքով, վերոնշյալ դեպքը մեկն է օրգանների թրաֆիքինգի բազմաթիվ լատենտային դեպքերից և հետևանք է, առաջին հերթին, տուժողների խոցելիության և իրավական անիրագրելիության:

Օրգանների թրաֆիքինգի վերաբերյալ ոչ իրագրելի լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ, ասելով «իմ մարմինը», «իմ օրգանը», յուրաքանչյուր անձ ընկալում է, թե իր օրգանների (հյուսվածքների) հետ կապված հարաբերությունները սեփականության իրավունքի տիրույթում են գտնվում և, որպես այդպիսին, ենթադրում են այդ օրգանների (հյուսվածքների) տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավագործություն: Մինչդեռ իր մարմնի և դրա մասերի հետ կապված որոշումներ կայացնելու՝ անձի (տվյալ դեպքում՝ կենդանի դոնորի) իրավագործությունը գտնվում է անձնական ազատության, ան-

ձեռնմխելիության և արժանապատվության իրավունքների տիրույթում:

Մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը կյանքի և ազատության բնական իրավունքներից անձանցված, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորություններն են: Մարդու բնական ազատությունն ամենից առաջ վերաբերում է նրա անձին: Ազատության այդ կողմն անվանում են անձնական ազատություն: Անձնական ազատությունը նշանակում է, որ մարդն իրավունք ունի ազատորեն տեղաշարժվելու, ինչպես նաև ընտրելու իր գտնվելու վայրը: Այս իրավունքով օժտված է յուրաքանչյուր մարդ՝ անկախ տարիքից, սոցիալական կարգավիճակից կամ մեղսունակությունից: Իրականացվում է անձամբ կամ, եթե խոսքը փոքրահասակների, անմեղսունակների մասին է, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների միջոցով⁷:

Ազատության իրավունքի հետ սերտորեն կապված է անձի անձեռնմխելիության իրավունքը, որը բացառում է որևէ արտաքին միջամտություն մարդու անհատական կենսագործունեությանը, ապահովում է ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիություն: Լայն իմաստով՝ անձնական անձեռնմխելիությունը մարդու ֆիզիկական (կյանք, առողջություն) և բարոյա հոգևոր (պատիվ, արժանապատվություն) անձեռնմխելիությունն է, ինչի արդյունքում բոլորը պարտավոր են չմիջամտել մարդու անհատական կենսագործունեությանը⁸:

Մոսկվայի Եհովայի վկաները և այլոք ընդդեմ Ռուսաստանի գործով (գանգատ թիվ 302/02) 2010 թվականի հունիսի 10-ին կայացված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի բուն էությունը մարդու արժանապատվության և ազատության նկատմամբ հարգավոր է, իսկ ինքնորոշման և անձնական ինքնավարության գաղափարներն այն կարևոր սկզբունքներն են, որոնք ընկած են դրանում նախատեսված երաշխիքների մեկնաբանման հիմքում (տե՛ս, Pretty v. the United Kingdom, գանգատ թիվ 2346/02, կետեր 61 և 65, ECHR 2002 III): Սեփական կյանքը սեփական ընտրությամբ ապրելու՝



անձի ունակությունը ներառում է վերջինիս համար վնասակար կամ վտանգավոր վարքագիծ դրսևորելու հնարավորությունը: Այս համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ առանց իրավունակ, չափահաս անձի համաձայնության իրականացված բժշկական միջամտությունը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող՝ անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում (տե՛ս, *Pretty v. the United Kingdom*, գանգատ թիվ 2346/02, կետեր 62 և 63, ECHR 2002 III, ինչպես նաև *Acmanne and Others v. Belgium*, գանգատ թիվ 10435/83, Հանձնաժողովի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի որոշում):

Բժշկական միջամտության ենթարկվելու (այդ թվում՝ օրգանի կամ հյուսվածքի դոնոր հանդես գալու) վերաբերյալ անձի կամային, գիտակցված և տեղեկացված համաձայնությունը՝ որպես բժշկական իրավունքի հիմնարար սկզբունք⁹ ամրագրված է նաև «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում¹⁰:

Օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման ոլորտում դոնորի համաձայնության վերոնշյալ չափանիշներից որևէ մեկի բացակայությունը նշանակում է, որ բացակայում է համաձայնությունն ընդհանրապես, և առկա է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող՝ անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում: Ուստի, օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման ոլորտում դոնորի համաձայնության հանգամանքը յուրաքանչյուր դեպքում պետք է համակողմանի ուսումնասիրության ենթարկվի՝ պարզելու համար, թե օրգանը և (կամ) հյուսվածքը տալու վերաբերյալ համաձայնություն տալիս դոնորը պատշաճ տեղեկացվել է իր արարքի հնարավոր հետևանքների վերաբերյալ, գիտակցում է արդյոք իր արարքն ու դրա հետևանքները և առկա չէ արդյոք որևէ գործոն (ներքին կամ արտաքին), որը հարկադրում է անձին տալ օրգանը և (կամ) հյուսվածքը հակառակ իր

կամքի: Այլ խոսքով՝ չկա արդյոք դոնորի ազատ կամահայտնության վրա ազդեցություն ունեցած և նրա կամքը ճնշած որևէ ներքին կամ արտաքին գործոն:

Ուստի, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իր մարմնի և դրա մասերի հետ անձի «հարաբերությունները» դատական ընկալմամբ «սեփականատիրական» հարաբերություններ չեն, գործող ներպետական¹¹ և միջազգային-իրավական¹² կարգավորումները բացառում են մարմնի և դրա մասերի առուվաճառքի հնարավորությունը և յուրաքանչյուր դեպքում պահանջում, որ օրգաններ և (կամ) հյուսվածքներ տալու վերաբերյալ անձի համաձայնությունը լինի տեղեկացված, գիտակցված ու կամային:

Դիակային դոնորի պարագայում ևս օրգանների և (կամ) հյուսվածքների վերաբերյալ կայացված որոշումները չեն բխում «սեփականատիրական» իրավագործություններից: Այստեղ առաջնային է արժանապատվության իրավունքը: Ասվածում համոզվելու համար կարելի է կարճ պատմական անդրադարձ կատարել դիակի նկատմամբ վերաբերմունքի կապակցությամբ տարբեր մշակույթներում առկա մոտեցումներին:

Այսպես՝ Հին Հռոմի քաղաքացիական իրավունքի համաձայն՝ դիակի հուղարկավորության ծախսերը պարտավոր էր հոգալ այն անձը, ում այդ պարտականությունը հանձնվել էր հանգուցյալի ցանկությամբ: Հանգուցյալի կամահայտնության բացակայության պայմաններում՝ այն անձը, ում հանգուցյալը որպես ժառանգություն թողել էր իր գույքը: Իսկ հուղարկավորության վայրի կամ հուղարկավորություն իրականացնող անձի բացակայության դեպքում հուղարկավորությունն իրականացվում էր եկեղեցական համայնքի կողմից:

17-րդ դարում Եվրոպայում առկա կարգավորման համաձայն՝ դիակների հուղարկավորության պարտականությունը կրում էր եկեղեցին: Ի տարբերություն Հին Հռոմի, միջնադարյան Եվրոպայում դիակի նկատմամբ պարտականությունների իրականացման հետ կապված հարցերը (հուղարկավորությունը, դիակի նկատմամբ պատշաճ և հարգալից վերաբերմունքը) որևէ առնչություն չունեին սեփականության իրավունքի հետ¹³: Դա է վկայում, մասնավորապես, *Rex v. Stewart*



ԼՂՀ դատական իշխանություն

գործով 1840 թվականին Անգլիայում կայացված որոշումը¹⁴: Սույն որոշմամբ սահմանվել է, որ «(...) ողջ մարդկանց զգացմունքները և շահերը պահանջում են, որ (...) յուրաքանչյուր մարդու դին ծածկված վիճակում հուղարկավորվի այն անձի կողմից, ում տանիքի տակ ապրում էր մահացած անձը»: Մինչև 19-րդ դարի վերջը ամերիկյան դատարանների մոտեցումները համընկնում էին անգլիական ընդհանուր իրավունքի կողմից որդեգրված մոտեցումներին: Ամերիկյան դատարանները ևս գտնում էին, որ «դիակը սեփականության իրավունքի առարկա չէ»: Սակայն բժշկական հետազոտությունների նպատակով դիակների օգտագործման և դիակիզության՝ որպես հուղարկավորության այլընտրանքի տարածման պատճառով դատարաններն սկսեցին ճանաչել մահացած անձանց իրավահաջորդների իրավունքները՝ կապված դիակի տիրապետման և դրա նկատմամբ վերահսկողության իրականացման հետ:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվում այն մասին, որ դատական պրակտիկայում առկա մոտեցման վերոնշյալ փոփոխությունը հետապնդում էր նույն նպատակը, ինչ միջնադարյան Եվրոպայում էր, այն է՝ ապահովել արժանապատիվ և հարգալից վերաբերմունք մահացած մարդու մարմնի նկատմամբ¹⁵:

«Արժանապատվություն» հասկացությունը որպես սոցիալական կատեգորիա նախասահմանում է «անձի արժանապատվություն» սահմանադրական կատեգորիայի բովանդակության համապարփակությունը և, միաժամանակ՝ բազմիմաստությունը: Որպես սահմանադրական նախադրյալ (իրողություն)՝ անձի արժանապատվությունը հանդես է գալիս մարդու՝ իբրև կենսահոգեբանասոցիալական էության անհրաժեշտ և անքակտելի որոշիչ հատկանիշ՝ կարգելով նրան որպես սոցիալական կենսագործունեության լիիրավ և իրավահավասար սուբյեկտ:

Մարդկային արժանապատվությունը, ինչպես որ կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն: Որևէ հանգամանք, այդ թվում հանրաճանաչ ըմբռնողությամբ անձի բացասական գնահատականը, հոգեկան հիվանդությունը, արտակարգ իրավիճակը, պատերազմը և

այլն, չեն կարող արժանապատվության նսեմացման հիմք հանդիսանալ: Անձի արժանապատվության նսեմացման ներքո հասկացվում է ինչ-որ մեկի այնպիսի վարքագիծը, որը պատվազրկում է նրան, վնասում է անձի վարկանիշը՝ այդպիսով նրան պատճառելով բարոյական տառապանքներ:

Արժանապատվությունը բնորոշ է նաև իրենց անհատականությունը դեռևս չզիտակցող կամ այն (այլևս) հարատև չզիտակցող անձանց, քանզի պահպանվում է այն գիտակցելու պոտենցիալ հնարավորությունը¹⁶: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ արժանապատվության իրավունքով օժտված է նաև մարդու սաղմը (էմբրիոնը)¹⁷:

Վերոշարադրյալ վերլուծության համատեքստում տրամաբանական է, որ մարդու, այդ թվում՝ օրգանների թրաֆիքինգի համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132²-րդ հոդվածները ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված են «Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 17-րդ գլխում: Նշված հոդվածներում ամրագրված հանցակազմերի **օբյեկտը** մարդու ազատության, պատվի և արժանապատվության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է թրաֆիքինգի հասկացությունը: Նշված հոդվածի համաձայն՝ մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելն է, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով:

ՀՀ քրեական օրենսգրքի 132²-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում շահագործման նպատակով երե-



խային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկլարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելու կամ շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու համար:

Թրաֆիքինգը¹⁸ ժամանակակից ստրկությունն է, որի հիմքում ընկած է մարդու «սպառնալուսնացումը», այսինքն՝ վերաբերմունքը որպես առարկայի, որի միջոցով կարելի է եկամուտ ստանալ¹⁹: ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածում թրաֆիքինգը նկարագրված է ձևական հանցակազմով, այսինքն՝ արարքը ավարտված թրաֆիքինգ որակելու համար բավարար է, որ անձի նկատմամբ շահագործման նպատակով կատարվի ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը նույն մասում նշված որևէ միջոցով:

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132²-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված հանցագործություններից²⁰ յուրաքանչյուրի **օբյեկտիվ կողմը** կազմավորվում է այլընտրանքային գործողությունից (գործողություններից) և այդ գործողությանը (գործողություններից) ուղեկցող այլընտրանքային միջոցից (միջոցներից): Միջոց բառը տվյալ դեպքում օգտագործվում է որպես պայմանական հասկացություն, և այն, որ «միջոցը» («միջոցները») նույնպես գործողություն է («գործողություններ են»), սակայն այն (դրանք) ուղեկցում է (ուղեկցում են) հիմնական գործողությունը (գործողությունները):

Թրաֆիքինգի դեպքում այլընտրանքային գործողություններն են՝ մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:

Նշված գործողությունների համակցությունը կազմում է մարդու շահագործմանը հանգեցնող գործողությունների ամբողջական շղթան: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ արարքը թրաֆիքինգ որակելու համար պարտադիր չէ նշված գործողությունների համակցության (ամբողջական շղթայի) առկայությունը: Բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններից մեկի առկայությունը, եթե

այն կատարվել է նույն հոդվածի նույն մասում թվարկված միջոցներից մեկի կիրառմամբ և հետապնդել է նույն հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ շահագործման նպատակ²¹:

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով, ինչպես նաև նույն օրենսգրքի 132²-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Վերոգրյալից հետևում է, որ օրգանները կամ հյուսվածքները վերցնելու ձևով շահագործման նպատակը դրսևորվում է նրանում, որ թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ հավաքագրվում, փոխանցվում կամ ստացվում է ի շահ երրորդ անձանց՝ օրգան(ներ)ի և (կամ) հյուսվածք(ներ)ի հարկադիր դոնոր լինելու կամ շահադիտական այլ նպատակով օրգան(ներ)ը և (կամ) հյուսվածք(ներ)ը վերցնելու համար:

Շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով՝ շահագործումը դրսևորվում է նրանում, որ թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ փաստացի շահագործվում է (կորզվում են օրգան(ներ)ը և (կամ) հյուսվածք(ներ)ը) կամ դրվում օրգան(ներ)ի և (կամ) հյուսվածք(ներ)ի հարկադիր դոնոր լինելու կամ շահադիտական այլ նպատակով օրգան(ներ)ը և (կամ) հյուսվածք(ներ)ը վերցնելու վիճակի մեջ կամ պահվում է այդ վիճակում²²:

Մինչ 2011 թվականի մարտի 1-ը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր նախատեսում փոխապատվաստման կամ գիտափորձերի նպատակով անձին մարմնի մասեր կամ հյուսվածքներ տալուն հարկադրելու համար՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն էր նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել է անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ, հանցավորից նյութական կամ այլ կախվա-



ԼՂՀ դատական իշխանություն

ծուքյան մեջ գտնվող անձի նկատմամբ, անչափահասի նկատմամբ: Հողվածի 3-րդ մասը պատասխանատվություն էր նախատեսում 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքի համար, որը կատարվել էր կազմակերպված խմբի կողմից:

2011 թվականի մարտի 1-ի ՀՕ-69-Ն օրենքով ուժը կորցրած ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 126-րդ հոդվածը՝ օրենսդիրն օրգանները կամ հյուսվածքները վերցնելը դիտել է որպես մարդու թրաֆիքինգ, որը կարող է դրսևորվել ինչպես շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու, այնպես էլ մարդուն շահագործելու կամ շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու եղանակով:

Ինչ վերաբերում է մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ տալուն հարկադրելուն, ապա կարծում ենք, նման արարքը ենթակա է որակման որպես թրաֆիքինգի փորձ: Պրակտիկայում առկա են նաև մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ տալուն հարկադրելը որպես շահագործման փորձ որակելու դեպքեր: Այս որակման կողմնակիցները գտնում են, որ անհրաժեշտ է տարբերել «մարդու շահագործում», «շահագործման վիճակի մեջ դնել կամ պահել» և «թրաֆիքինգ» հասկացությունները: Մեր կարծիքով, սակայն, նման տարբերակումը չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից, որի համաձայն՝ մարդու շահագործումը, նրան շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը կազմող արարքներն են, որոնք թվարկված են նկարագրական դիսպոզիցիայում՝ որպես թրաֆիքինգը բնորոշող արարք և, հետևաբար, ինքնուրույն հանցագործություն չեն հանդիսանում: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի վերնագրին՝ «Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը», ապա հարկ ենք համարում ընդգծել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա գլխի, բաժնի կամ հոդվածի մեկնաբանման համար»: Հետևաբար, մարդուն օրգաններ և

(կամ) հյուսվածքներ տալուն հարկադրելու դեպքում գործ ունենք թրաֆիքինգի փորձի և ոչ թե շահագործման փորձի հետ:

Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու հետ կապված դիտավորյալ հանցագործություն է նաև մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը և երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը: **Սուբյեկտիվ կողմից** նշված հանցագործությունները բնութագրվում են միայն ուղղակի դիտավորությամբ: Ընդ որում, տուժողին հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու պարագայում հանցագործության պարտադիր հատկանիշ է շահագործման նպատակը: Այսինքն՝ պարտադիր է, որպեսզի հանցավորը գիտակցի, որ ինքը տուժողին հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, թաքցնում կամ ստանում է նրա օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով:

Նշված հանցագործություններում ամրագրված հանցակազմի **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած, մեղսունակ, ֆիզիկական անձը:

Քանակի բառեր. օրգան, հյուսվածք, փոխապատվաստում, թրաֆիքինգ, սարկություն, շահագործում, ազատություն, արժանապատվություն, անձեռնմխելիություն:



1. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաչայն՝ օրգանը փարբեր հյուսվածքներից բաղկացած (որոնցից մեկը գլխավորն է՝ առաջաբարբ) և որոշակի շե ունեցող մարմնի մաս է, որը փարբերվում է իր հարակ կառուցվածքով, օրգանիզմում գրադեցրած որոշակի րեդով և կենսագործունեությանբ:

2. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաչայն՝ հյուսվածքը ծագման, կառուցվածքի և ֆունկցիաների միասնությանբ միավորված, կազմավորված բջիցների և արտաբջջային նյութի ընդհանրությունն է:

3. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաչայն՝ մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների կենդանի դոնորը փոխապարվասարման նպարակով իր օրգանները և (կամ) հյուսվածքները սույն օրենքով սահմանված կարգով կամովին րրամարդող ֆիզիկական անչն է:

Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների դիակային դոնորը մարդու դիակն է, որից վերցվել են օրգաններ և (կամ) հյուսվածքներ ուղեդային մահվան՝ առողջապահության բնագավառի պեարական կառավարման լիագոր մարմնի (այսուհեար՝ լիագոր մարմին) սահմանած կարգով մահվան փասարի հասարարումից հեար:

4. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաչայն՝ փոխապարվասարումը բացակայող կամ ախարաբանական գործընթացի հեարևանքով վնասված հյուսվածքների կամ օրգանների փոխարինումն է սեփական կամ այլ օրգանիզմից վերցված հյուսվածքներով կամ օրգաններով:

5. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաչայն՝ ռեցիպիենտը ֆիզիկական անչն է, որին բուժական նպարակով պեարք է փոխապարվասարվեն օրգաններ և (կամ) հյուսվածքներ:

6. Տն՝
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812286279

7. Տն՝ Հայասարանի Հանրապեարության քրեական իրավունք: Հարունչ մաս (հինգերորդ հրարարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Երևանի պեար. համալս. - Եր., ԵՊՀ հրար., 2011, Էջեր 188, 199, 208-209:

8. Տն՝ «Հայասարանի Հանրապեարության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խնթագրությանբ Գ.Հարությունյանի, Ա.Վարդարյանի, Երևան 2010, Էջեր 186-197:

9. Տն՝ Brendan Greene. *Understanding Medical Law* // Cavendish Publishing Limited, London, Sydney, Portland, Oregon 2005, Էջ 15:

10. Ռեցիպիենտին փոխապարվասարելու նպարակով կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը բուլլասարվում է, եթե (...) դոնորն իրենից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու համար կամովին և գիարակցարար րվել է գրավոր համաչայնություն:

11. ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 25-րդ հոդվածի 3-րդ մասն արգելում է մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարչնելը, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածն արգելում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների և հյուսվածքների առուվաճառը:

12. Տն՝, օրինակ, 35-րդ Համաչարարային բժշկական ասամբլեայի կողմից 1983 թվականին Վենեարիկում ընդունված՝ Տեարմիալ վիճակի մասին հռչակագիրը, Առողջապահության համաչարարային կազմակեարության դեկավար սկզբունքները, որոնք կարգավորում են օրգանների փոխապարվասարման հեար կապված հարցեր (հասարարվել են 1991 թվականին կայացած՝ Առողջապահության համաչարարային ասամբլեայի 44-րդ նարաչրչանի ընթացքում), ինչպես նաև Համաչարարային բժշկական ասամբլեայի կողմից 1987 թվականին ընդունված՝ Մարդու օրգանների փոխապարվասարման մասին հռչակագիրը, «Մարդկային օրգանների փոխապարվասարում իրականացնելիս բժիշկների վարքագծի հեար կապված հարցերի վերարերյալ» 1994 թվականի բսնաչևը, Արհեարական բեդմնավորման և Էմբրիոների փոխապարվասարման վերաբերյալ 1987 թվականի հայարարարությունը, «Մարդու իրավունքների և թիորժկության մասին» Օլլիեոյի 1994 թվականի կոնվենցիան:

13. Տն՝ Patricia A.King, Judith Areen, Lawrence O.Gostin. *Law, Medicine and Ethics*. Foundation press of Thomson/West, New York 2006, Էջ 223:

14. Տն՝ Rex v. Stewart, 12 AD. & E. 773 (1840):

15. Տն՝ Patricia A.King, Judith Areen, Lawrence O.Gostin. *Law, Medicine and Ethics*. Foundation press of Thomson/West, New York 2006, Էջ 226:



ԼՂՀ դատական իշխանություն

16. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ Պ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան 2010, էջեր 163-170:

17. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված քանաչևերով (16.03.1969թ. A 2 327/88 և A 2 372/88՝ ընդունված 1969 թվականի մարտի 16-ին) սահմանվել է, որ մարդու սաղմի (էմբրիոնի) վրա, բոլոր դեպքերում, փարսածվում է մարդկային արժանապատվությունը հարգելու պահանջը: Եվրոպայի խորհրդի՝ բիոէթիկայի հարցերով նախաշրջանի (1996 թվականի ապրիլ) արդյունքում արված հայտարարության համաչայն՝ Էմբրիոնը բեղմնավորումից հետո 14-րդ օրվանից սկսած հանդիսանում է «մարդ»: Այս հայտարարության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ բեղմնավորումից մի քանի օր հետո պորդի մոտ շևավորվում են շնչառական, նյարդային և մարտդական համակարգերը, 18 օրից սկսում է բարձրանալ սիրտը, 21 օրից սկսում է գործել արյան շրջանառության համակարգը, 6 շաբաթական փափրում նա կատարում է առաջին շարժումները, 8 շաբաթական փափրում նա կարող է բռնել իր ափի մեջ դրված առարկան, ճիշտ այնպես, ինչպես նորածինը: 10-11 շաբաթական պորդից կարելի է մարմնահետք վերցնել, այդ փափրում նա շարժում է աչքերն ու լեզուն: 11-12 շաբաթում արդեն շնչում է, արշազանքում է լույսին, ջերմությանը, աղմուկին, նրա բոլոր օրգան-համակարգերն ամբողջությամբ շվավորված են: 14 շաբաթական էմբրիոնի սիրտը օրական 24 լիպր արյուն է մղում, այս մասին փես Ա. Попов А. Убийство материю своего новорожденного ребенка. — СПб.: Петерб. Юрид. Ин-т Ген. Прокуратуры РФ, 2001, էջ 12:

18. Թրաֆիքինգի սահմանումն առաջին անգամ փրվել է Պալերոնոյի 2000թ.՝ Մարդկանց, հարկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին Արշանագրության 3-րդ հոդվածի «ա» կետում: Առանձին փոփոխություններով մարդկանց թրաֆիքինգի սահմանումը փրված է «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի խորհրդի 2005 թվականի մայիսի 16-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետում, որի վրա հիմնված է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում փրված թրաֆիքինգի սահմանումը:

19. Տե՛ս Երեմյան Ա., Թունասյան Դ., Ղամբարյան Ա., Պերրոսյան Ս. «Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման

դեմ պայքարի իրավական հիմունքները»: Երևան «Աստղիկ» Հրատ., 2011, էջ 16:

20. Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու հետ կապված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի վերլուծության համար տեսքում հարկ ենք համարում ընդգծել, որ մի շարք երկրների քրեական օրենսգրքերում առկա է օրգանների կամ հյուսվածքների սպորիկի առուվաճառքի համար պատասխանատվություն նախատեսող առանձին նոր, օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի համաչայն՝ մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների սպորիկի առուվաճառքը պատժվում է փուզանքով՝ նվազագույն աշխարավարչի 2-5-ապարիկի չափով կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև 2 փարի ժամկետով կամ ազատագրկմանը՝ մինչև 3 փարի ժամկետով՝ որոշակի պաշտոնների զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև 3 փարի ժամկետով կամ առանց դրա): ՌԴ-ում (127.1-րդ հոդված) և Բելառուսիայում (181-րդ հոդված) քրեական պատասխանատվություն է նախատեսվում մարդկանց առևտրի՝ այդ բվում՝ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով կատարվող վերնուշյալ հանցավոր արարքի համար:

21. Տե՛ս Երեմյան Ա., Թունասյան Դ., Ղամբարյան Ա., Պերրոսյան Ս. «Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները»: Երևան «Աստղիկ» Հրատ., 2011, էջ 74:

22. Տե՛ս նույն փեղում, էջ 65: